միջով: Այդ մշուշի միջով նկարւում էին հեռաւոր լեռները իրանց սպիտակափառ գագաթներով, այդ մշուշի միջով երեւում էր Վանայ ծովակը իր գեղագրական եզերքով, այդ մշուշի միջով նշմարւում էր ջրային հսկայ լողորդը, որը, իբրեւ մարմնացած առաջադիմութիւն, սլանում էր արա՛գ եւ արա՛գ, թողնելով ծովի խաղաղ մակերեւոյթի վրայ մի արծաթափայլ շաւիղ, իսկ օդի մէջ՝ ծխային երկար ժապաւէն:

Ոստանից ոչ այնքան հեռու գտնւում էր Ռազմիրան գիւղը: Այդ գիւղը իւր գեղեցիկ դիրքով ամենահին ժամանակներում Ռշտունի իշխանների զբօսավայրն էր, իսկ յետոյ Արծրունի իշխանների ամառանոցը դարձաւ: Բայց այժմ նրա մի կողմում, կանաչազարդ բարձրաւանդակի վրայ, կանգնած էր մի սիրուն, քարաշէն տուն: Նրա մի ճակատը նայում էր դէպի կապուտակ ծովը, իսկ միւս ճակատը՝ դէպի մի գեղեցիկ պարտէզ, որ տան առջեւից տարածւում էր դէպի ներքեւ եւ լայն, ծառազարդ թումբերով աստիճան առ աստիճան իջնում էր մինչեւ ձորը: Պարտէզում, այգեպանի սուր դանակը ձեռին, աշխատում էր մի մարդ: Տարիների ալիքները դեռ նոր էին սկսել արծաթագրել նրա գլխի սեւ մազերը: Իսկ թուխ դէմքի վրայ դեռեւս պահպանոել էր երիտասարդական աշխոյժը: Նա զգուշութեամբ ճեղքում էր մատաղ տունկերի կեղեւը եւ, ճեղքուածքի մէջ անց կացնելով նորաբողբոջ շիւղեր, կապում էր փափուկ թելով: Նրա մօտ կանգնած էր մի փոքրիկ աղջիկ, գարնանային թեթեւ հագուստով եւ յարդեայ մեծ գլխարկով, որի լայն եզերքը հովանիի նման հասնում էին մինչեւ ուսերը: Նա ձեռքում բռնած ունէր ջրով լի թիթեղեայ մի թաս, որի մէջ լողում էին դալար բողբոջներ: Առաւօտեան զով օդը պայծառ-վարդագոյն երանգով ներկել էր այդ գեղեցիկ հրեշտակի լիքը թշերը, որ կապած էին սպիտակ թաշկինակով: Բայց այդ չէր արգելում նրան իր անվերջ շատախօսութեամբ աւելի խանգարել հօրը, քան թէ օգնել նրան:

— Դրան ասում են պատուհա՞ս, հայրիկ:

— Պատոաստ, — ուղղեց հայրը: — Դու ե՞րբ պէտք է սովորես այդ բառը, Աշխէն:

— Սովորեցայ, հայրիկ, պակուտաս, այդպէս չէ՞:

— Հիմա աւելի փչացրիր:

— Ի՞նչ անեմ, լեզուս չէ բռնում:

— Մինչեւ այդ բառը ուղիղ չարտասանես, մայրիկին կասեմ, որ նախաճաշիկի ժամանակ քեզ քաղցր չտայ: